# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 104 - Ա

04 հուլիսի 2013թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 100% ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆ ՎՃԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Բաժնետիրական ընկերությունների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի ժբ/ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 1194 և 2011 թվականի մարտի 3-ի թիվ 202-Ն որոշումների պահանջների.

Որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) ՀՀ Գեղարքունիքի մարզի առողջապահական ընկերությունների 2012 թվականի տարեկան տնտեսական գործունեության արդյունքներով, 2013 թվականին ՀՀ պետական բյուջե տարեկան շահութաբաժինների վճարման չափի վերաբերյալ առաջարկությունները (հավելված 1):

2) ՀՀ Գեղարքունիքի մարզի առողջապահական ընկերությունների 2012 թվականի տարեկան տնտեսական գործունեության արդյունքներով զուտ շահույթի բաշխման ուղղությունների վերաբերյալ նախահաշիվները:

2. Հանձնարարել՝

1) Հավելված 1 տեղեկանքում ընդգրկված ընկերությունների տնօրեններին՝ շահութաբաժինների գումարները սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան մինչև ս.թ. հոկտեմբերի 1-ը փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900005200440 հաշվին:

2) Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Ա. Սահակյան) ընկերությունների 2012թվականի տնտեսական գործունեության արդյունքներով 2013 թվականին ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի և զուտ շահույթի բաշխման ուղղությունների նախահաշիվների վերաբերյալ ընդհանուր ժողովի որոշման քաղվածքը 15-օրյա ժամկետում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական վարչության պետ Ա. Սահակյանին

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ